

«Յովհաննէս անուռն յոմն արեղայէ,
Սաղիմայ Սրբոյ ի յաւելածուէ,
Գրի սա ի սէր յընծայեալ սրտէ
Էնքստն ի թիւ որ փրկչականն է»:

Իսկ երբորդը Մարիամ նահատակին տապանագիրն է ուրուն վերջը յօրինողը գրած է հետեւեալը.

«Յովհաննէս անուռն հիւսեաց արեղայն
Սըրբոյն Սաղիմայ գայտ տապանի բան
Ի պատիւ իւր մօր Մարիամ անուան
Յամի հերատն (=1810) թըւոյ փրկչական»:

(Հնդ). Բ. Հատ. էջ 311—313. *Ururus*. 1895 էջ 445—452):

ՅՈՎՀԱՆՆԷՍ Ա.Ֆ. — Մբ. 1354ին. Ս. Յակոբի վանքին մէջ կ'ընդօրինակէ Գաւնգիրօ մը և կը գրէ հետեւեալ յիշատակարանը. «*Փառք... որ ետ կարողութիւն տկար անձին և ... և գըծողիս Յովհաննէս լոկ անուռն արեղայի հասանել յաւարտ գըրոյս, յամի ՊԳ (=1354) թուականիս մերում ի սուրբ քաղաքս Երուսաղէմ. ընդ հովանեաւ Ս. Յակոբայ և այլ սուրբ տնաւորինականաց Քի. Ա.յ. մերոյ: Արդ՝ աղաչեմ և յերես անկեալ դամ. դասս քահանայից, որք հանգիպիք. յիշեսջիք ի սուրբ յաղաւթս ձեր զանարուեստ գծողս իմ և զամենայն արեան մերձաւորք իմ (Հալեպ. Յուզ. Թ. 119):*

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐՔԵՊՍ ԻԼՈՎՅԻ. — 1375ին եպս. կը ձեռնագրուի Սոսյ մէջ Կոստանդին կթղէն. ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը. 1388ին Թէոդորոս կթղին հրամանով կը մեկնի Երուսաղէմէն և պաշտօնանկ Գրիգոր եպս.ի տեղ կը կարգուի արքեպս. Իլովի. 1410ին Բ. անգամ ուխտի կուգայ Ս. Յակոբի վանքը, եղբորը Յովհաննէս արեղայի հետ:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐՔԵՊՍ. ՌՇՏՈՒՆԻ. — Նախորդ Առ. Կարսի. 1868ին ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը և Մարտ ամսոյ վերջերը կը մեկնի Պոլիս (*Սիօն*. 1868. էջ 46 և 95), Յովհաննէս եպս. յետ մահու գումար մը թողած էր. իր յաջորդ Գրիգորիս եպս. Աղուանեան յօգուտ Կարսի ազգ. վարժարանին, նոյն գումարով գնած է Կարս գետի վրայ ջրաղաց մը և նաև Կարսէն ոչ հեռի Կարալայի անուամբ գիւղ մը, որ